Մանկավարժական ինստիտուտում, ինչպես նաև ասպիրանտական մեկ թոչակ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտում։ 1948—49 թվերին ավարտել Աբովյանի երկերի ժողովածուի հրատարակությունը ութ հատորով։

Հանդիսավոր նիստը վերջում բուռն ծափահարությունների տակ ընդունում է ողջույնի հեռագիր ընդունված ժողովուրդների առաջնորդ Մեծ Ստալինին։

Ընդունվում է ողջույն նաև Հայաստանի բոլշևիկների զեկավար ընկ. Գր. Հարությունյանի անունով։

Հայկական ՍՍՌ Գեղական Հիմնի հնչյունների տակ հանդիսավոր նիստը փակվում է։

ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱ՝ ՆՎԻՐՎԱԾ ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻՆ

Սեպտեմբերի 22—24-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի յոթերորդ գիտական սեսիան, նվիրված Խաչատուր Աբովյանի մահվան հարյուրամյակին։

Սեպտեմբերի 22-ի երեկոյան նիստում լսվեց Ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Ա. Ասատուրյանի զեկուցումը «Աբովյանը մեծ լուսավորիչ-դեմոկրատ» թեմայով և Ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Էդ. Թոփչյանի զեկուցումը «Վերը Հայաստանի» վեպի իդեական բովանդակության մասին»։

Սեպտեմբերի 23-ի ցերեկվա նիստում Ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Վ. Պարտիզունին զեկուցեց «Աբովյանը հայ-ռուս բարեկամության ջատագով» թեմայով։

«Աբովյանի ստեղծագործության ժանրերը» թեմայի շուրջը զեկուցեց Դ. Դեմիրճյանը։

Ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Ա. Ղանալանյանը զեկուցեց «Աբովյանը և ժողովրդական բանահյուսությունը» թեմայի մասին։

Սեսիայի վերջին նիստում, որը կայացավ սեպտեմբերի 24-ի երեկոյան, լսվեց Ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու ընկ. Ղ. Այվազյանի զեկուցումը «Աբովյանը և ժողովուրդների բարեկամությունը»։